



Արամաթափ մի մարդ,
գանգը նման կապկի,
Նարեկ էր կոկորդիս եւ ինձ
խեղդում էր...
Թույն էր թորում նա իմ
գիշերային շապկին -
Եվ անունը նրա...
«Քնքշություն» էր...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՅ

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Գինը 100 դրամ:

ՀԱՐԱՑ
23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013Թ. № 32 (305)



Սիսիանի հիվանդանոցի կիսակառույց շենքը

Մեղրի. փորձ է արվում հեկց քաղաքի ներսում կառուցել հէկ

ԻՐԱՎԻՃԱԿ

Իսկ համայնքի ավագանին ընդառաջ է գնացել այդ քայլին, ինչի վերաբերյալ անհամաձայնություն է հայտնել ու ավագանու անդամի լիազորությունները ցած դրել Միքայել (Մարատ) Օհանյանը



Լուսամասում - Կ. Հովհաննիսյանի

Սիսիանում վրդովված են ու անհանգստացած

Տեղի հիվանդանոցի եւ Աղիտուի կայազորային հոսպիտալի միավորման հավանականության շուրջ խոսակցությունները հասել են բարձրակետի

ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ, ԹԵ՛...

Այս օրերին Սիսիանում քննարկվող գլխավոր հարցը տեղի հիվանդանոցի եւ Աղիտուի կայազորային հոսպիտալի հնարավոր միավորումն է, իսկ ավելի ճիշտ՝ բուժական այդ հաստատությունների օպտիմալացման հեռանկարը: «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Արտյոն Թադևոսյանի տեղեկություններն

այդ գործընթացի մասին կցկտուր են: Սյունիքի նարգպետարանն էլ չի շտապում բացատրություն տալ եւ դիրքորոշում հայտնել ու, ինչպես շատ-շատ հարցերում, կողքից հայեցողի դերում է:

Մինչդեռ երկու բուժաստատության միավորումը, եթե տեղի ունենա, անխուսափելի կդարձնի բուժամօժանակազմի կրճատումը եւ հոսպիտալում, եւ «Սիսիանի բժշկական կենտրոն»

ՓԲԸ-ում: Միայն Սիսիանի բժշկական կենտրոնում ներկայումս աշխատում է մոտ 160 հոգի (այդ թվում՝ 30 բժիշկ, 80 բուժքույր):

Սիսիանում շատերն են փորձում ճշտել շրջանառվող այդ խոսակցության հավաստիությունը, ինչպես եւ հնարավոր այդ գործընթացի դրդապատճառները: Ոմանք դա համարում են միեւնույն տարածքում գործող երկու բուժաստատությունները՝ էջ 8

Մեղրու քաղաքապետարան. հեղադարձ հայացք մեկ տարվա ճանապարհին

Լրացավ Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանի պաշտոնավարման մեկ տարին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է հասցրել իրականացնել ժողովրդի վստահության քվեն ստացած քաղաքապետն անցած ժամանակաընթացքում: Փորձենք հակիրճ ներկայացնել սույն հրապարակման միջոցով:

Համայնքի նորընտիր ղեկավարությունն առաջնահերթ խնդիր համարեց իր գործունեության քառամյա ծրագրի մշակումն ու հաստատումը, որտեղ ներառվեցին համայնքի զարգացման բոլոր ուղղություններն ու ոլորտները:

Առաջնային համարվեցին աշխատակազմի մասնագետների՝ համայնքային ծառայողների

որակավորման բարձրացումը, ավագանու կարողությունների զարգացումը, ուսուցման կազմակերպումը: Այդ նպատակով նարգպետարանի, ԳՈՒՄ ՀԿ-ի հետ իրականացվեցին դասընթացներ: Ավագանու համար առանձնացվեց եւ կազմավորվեց անհրաժեշտ աշխատասենյակ:

Առաջնորդվելով ՀՀ սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով՝ հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է համայնքի ավագանու 6 նիստ, ընդունվել համայնքային մշտնակուսության տասնյակ որոշումներ: Դրա հետ մեկտեղ բարձրացել է ավագանու անդամների



Արշավիր Հովհաննիսյան, Մեղրու քաղաքապետ

հեղինակությունը, սերտացել կապն ընտրողների հետ, որի շնորհիվ ոչ միայն մեծացել է համայնքում կատարված աշխատանքների մասին քաղաքացիների իրազեկվածությունը, այլեւ դրանց լուծման մեջ նրանց ներգրավվածության աստիճանը: Մի տեսակ փոխվել է մեղրեցու նվիրվածությունն իր համայնքին:

Ֆինանսական բնագավառում նորընտիր իշխանությունն իր մեկամյա գործունեության մեջ շարունակությունը՝ էջ 8

«Սիրելի՛ հայրենակիցներ

2013թ. նոյեմբերի 19-ին կատարել են մի արարք, որի մասին ձեզ տեղեկացնելը պարտքս են համարում:

Այդ օրը տեղի է ունեցել Մեղրի համայնքի ավագանու արտահերթ նիստ, որի ընթացքում քննարկվել է քաղաքի տարածքում հիդրոէլեկտրակայան կառուցելու նպատակով հողամասի կատեգորիա փոխելու հարց:

Ամնիջապես քաղաքի տարածքում հէկ կառուցելն իմ խորին համոզմամբ նոր խնդիրներ կառաջացնի համայնքի՝ առանց այդ էլ մտահոգիչ բնապահպանական իրավիճակում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, որպես ավագանու բնապահպանական հանձնաժողովի նախագահ, տարօրինակ եմ համարել նախ՝ նման հարցի համար ավագանու արտահերթ նիստ գումարելը (թեեւ օրակարգում այլ հարցեր էլ կային՝ ոչ սկզբունքային մշտնակուսության), ապա՝ կոչ եմ արել գործընկեր-շարունակությունը՝ էջ 8

Անախադեպ համաժողով սպասենք արդյունքներին



Սյունիքի մարզի տնտեսության ոչ լեռնահանքային հարավ-ծում ներդրումային հնարավորությունների քննարկմանն էր նվիրված Նոյեմբերի 11-13-ը Կապանում անցկացված համաժողովը: Ներկայացուցչական այդ միջոցառմանը մասնակցում էին Հայաստանում հավաքարձակված դիվանագետներ, դոկտոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործարարներ, ներդրողներ, ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, մարզի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարներ, անհատ ձեռնարկատերեր:

Կապանի մշակույթի կենտրոնում նոյեմբերի 11-ին տեղի ունեցավ մարզի տնտեսության դիվերսիֆիկացմանը (տնտեսության բազմազանացում) նվիրված համաժողովի բացումը, որը կազմակերպել էր եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երեսնամյա գրասենյակը՝ համագործակցությամբ «Վորլդ Վիզն Հայաստան» կազմակերպության, «Շուկաների Մեղրիի համար» ծրագրի, Սյունիքի մարզպետարանի, մարզի քաղաքապետարանների: Ողջերթի խոսքում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը նվաճում համարեց նման ձեռնարկը անցկացվող միջոցառումը: Նաև երախտագիտություն հայտնեց ԵԱՀԿ երեսնամյա գրասենյակի ղեկավարությանը և

դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին, ովքեր նպաստել են համաժողովի կայացմանը:

«Մեկտեղ հավաքվել և գնահատել մարզում ներդրումային հնարավորությունները, փորձել կողքից հայացք նետել մարզի տնտեսական կարողությունների վրա, փորձել Սյունիքն ավելի մատչելի ներկայացնել, ծանուցել անել այսօրվա առավելությունները և հնարավորությունները. սա մի Նոր իրողություն է: Մի կողմից պատահական չէ, որ Սյունիքի մարզն է ընտրվել՝ իր զարգացման հնարավորություններով հանդերձ, մյուս կողմից՝ այստեղ ձեռք բերած փորձն ու հնարավորությունները կարող ենք տարածել մյուս մարզերի վրա: Բացի այդ, համաժողովը հնարավորություն է ընձեռում Սյունիքը, իր լեռնահանքային «բրենդինգ» գառ, մի քիչ ընդգրկում ներկայացնել մեր գործընկերներին, լայն այն իմաստով, որ այստեղ մեծ հնարավորություններ կան զարգացնելու գյուղատնտեսությունը, նրա հետ կապված ճյուղերը՝ վերամշակող ձեռնարկությունները, սննդի արդյունաբերությունը, անասնապահությունը: Կարծում եմ՝ ոչ ոք մեջ կասկած չի հարուցում, որ մարզում բավականին մեծ է տուրիզմի զարգացման հնարավորությունը: Մեծ ուշադրություն ենք դարձնելու այս ոլորտների զարգացմանը, հատկապես դրանց հետ կապված ենթակառուցվածքների ձեռավորմանը և կայացմանը:

Այս առումով պիտի նշեմ, որ մարզը կարիք ունի նորմալ հյուրա-

նոցների, հատկապես Կապանի տարածաշրջանը: Գորիսում և «Տաթևի վերածնունդ» ծրագրի հետ կապված Տաթևին մերձ համայնքներում սպասարկման այդ ոլորտի ծառայությունները սկսել են աշխուժանալ: Քանի որ խոսվեց տուրիզմի մասին, կարծում եմ ոլորտի զարգացման գործում էական նշանակություն է ունենալու Կապանում օդանավակայանի վերագործարկումը, թեև ուղի փոքր ծավալով, բայց, այնուամենայնիվ, հնարավորություն տալով Կապան այցելողներին մարզկենտրոն հասնել կարճ և մատչելի ճանապարհով, մի խոսքով այն օդային կապով, որ մի ժամանակ այստեղ գործել է...»

Այնպես է ստացվել, որ Սյունիքի մարզը, իրոք, առանձնացել է միշտ իր բարի ավանդույթներով, միջազգային հանրության հետ համագործակցելու առումով: Տարբեր միջազգային կազմակերպություններ տարիներ շարունակ տարբեր դրսևորումներով ծրագրեր են իրականացրել այստեղ: Հուսով եմ, որ երեք օր տեղի ունեցող քննարկումները Նոր խթան կհանդիսանան, նոր հետաքրքրություններ կառաջացնեն համաժողովի կազմակերպիչների շրջանում, բացի այդ սպասվելիք ներդրումները կօգնեն բազմազան դարձնել մարզի տնտեսությունը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր, – ասաց փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը:

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը իր խոսքում նշեց, որ չնայած

վերջին տարիների արդյունաբերական ցուցանիշների կայուն աճին, Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական վիճակը չի գոհացնում: Քանի որ հանքարդյունաբերական ձեռնարկություններում նոր աշխատատեղերի ստեղծման առումով կան սահմանափակ հնարավորություններ: «Ուսումնասիրելով մարզի տնտեսության կառուցվածքը՝ ակնհայտ է դառնում, որ գործ ունենք տնտեսության այսպես ասած՝ կոշտ մոդելի հետ, այսինքն՝ արդյունաբերության ավելի քան 85 տոկոսը բաժին է ընկնում հանքարդյունաբերությանը, 10 տոկոսը՝ էներգետիկական ոլորտին: Դա է պատճառը, որ մեզ մտահոգում են արդյունաբերության մեկ ճյուղից կախվածության, բնակչության ցածր եկամուտների և կենսամակարդակի ցուցանիշները: Եթե սրան ավելացնենք վերջին տարիների համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները, ապա նոր հնարավորությունների բացահայտումը ժամանակի հրամայականն է: Եվ քանզի համաժողովն իր բնույթով առաջինն է, ակնկալվում են շահագրգիռ քննարկումներ, իսկ մարզպետարանը պատրաստ է լինելու մասնակիցների բոլոր առաջարկություններն ու դիտողությունները՝ մարզի զարգացման ծրագրերում դրանք հաշվի առնելու համար», – ասաց մարզպետը:

ԵԱՀԿ երեսնամյա գրասենյակը միայն Սյունիքում ունի կառույց, որը զբաղվում է տնտեսական և բնապահպանական անվտանգության հիմնախնդիրներով, գործունեություն ծավալում տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում: Նիսիների նվազեցման ուղղությամբ: ԵԱՀԿ երեսնամյա գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը ասաց, որ համաժողովը եզակի է իր տեսակի մեջ, ինչի մասին վկայում են մասնակիցների քանակը և քննարկվող հիմնախնդիրների շրջանակը: Նաև հայտնեց, որ համաժողովում առավել կարևորելու են ներդրումներն այն ճյուղերում, որոնք Սյունիքի տնտեսության դիվերսիֆիկացիայի պլանի մշակման ժամանակ ի հայտ են եկել (նախագիծը ֆինանսավորվել է ԵԱՀԿ-ի օժանդակությամբ): Բանախոսը հրճեց այս անդրադարձով Սյունիքում գրասենյակի գործունեությանը, Սյունիքի մարզում իրականացրած ծրագրերին: Գործարարության զարգացման և շուկայական մրցակցության ծրագրերի շրջանակում գրասենյակը զգալի աշխատանք է կատարել տարածաշրջանում տուրիզմի ոլորտի ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ: Մասնավորապես, Սյունիքում էկոտուրիզմի զարգացման նպատակով հրապարակվել է տուրիստական տեղեկատու, մոտ 150 հոգու համար՝ (հյուրանոցառեստորանային համալիրների աշխատակիցներ, մատուցողներ, զբոսավարներ) անցկացվել են տարբեր պարամունքներ մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով:

Երջակա միջավայրի պահպանության ծրագրի շրջանակում մարզկենտրոնում բնապահպանական Զարունակությունը՝ էջ 7

Լուրեր

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով 2013թ. նոյեմբերի 18-ին Սյունիքի մարզի դատախազ Նորայր Հակոբյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից՝ սեփական դիմումի համաձայն: Ընդամենը մեկ տարի առաջ՝ 2012թ. նոյեմբերի 7-ին, մարզի դատախազի պարտականությունները ստանձնած անձնավորության պաշտոնակատարունը, այնուամենայնիվ, որոշ հարցերի տեղիք է տալիս: Հիմնական հարցը, որ հետաքրքրում է մարզի բնակչությանը, հետեյալն է. ինչո՞ւ է հրաժարականի դիմում ներկայացրել Նորայր Հակոբյանը, եթե, իհարկե, ներկայացրել է:

Հայաստանի ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հրամանով Արայիկ Դավթյանն ազատվել է ոստիկանության Կապանի բաժնի պետի պաշտոնից: Վլադիմիր Գասպարյանի մեկ այլ հրամանով ոստիկանության Կապանի բաժնի պետ է նշանակվել ոստիկանության զննապետ Վարդան Գեւորգյանը:

Օրերս Կապանի N1 մանկական գրադարանում կազմակերպվեց հանդիպում կապանցի գրող-երգի-ծաբան Հրաչ Նուրիջանյանի հետ, ով 6 գրքի հեղինակ է. «Կաստակում է զոքանջը», «Արամտուն է վաճառական ժողովրդ», «Ժպիտներ թռչներին կյանքից», «Կապանցի Չալոլոն», «Վաչագանցիները Հայրենական մեծ պատերազմում», «Արդարացում»: Նա ներկայացրեց իր 35-ամյա ստեղծագործական ուղին, որի ընթացքում գրի է առել ու մշակել Կապանում տարածված ծիսադաշար պատմություններ, պրամիտ խոսքեր, ճանաչված մարդկանց զվարճալի գրույցներ: «Ուրիշների համար ամենասովորական թվացող երեւոյթի մեջ ես տեսել եմ անսովոր, ծիսադաշար, կորած մարդ եմ համարել նրան, ով կատակ չի հասկացել», – ասել է նա: Իրենց գնահատականը հնչեցրին ընկերները՝ Գրեմիկ Փարսազյանը, Սերժիկ Նուրիջանյանը, Կառլեն Թադևոսյանը: Երկրագիտական քանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանն արժեւորեց հեղինակի «Վաչագանցիները Հայրենական մեծ պատերազմում» գիրքը այն համարելով հերոս վաչագանցիներին նվիրված անձեռակերտ հուշարձան:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նոյեմբերի 19-ին հրապարակած «ՀՀ մարզերը և Երեւան քաղաքը թվերով» հերթական զեկույցում բերվել է ՀՀ մարզերի բնակչության թիվը: Ըստ այդմ Սյունիքի մարզի բնակչությունը մեկ տարվա ընթացքում նվազել է 11 հազարով կամ 7.3 տոկոսով:

Պաշտոնավարման մեկ տարին լրանալու կապակցությամբ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը նոյեմբերի 15-ին կազմակերպեց մամուլի ասուլիս, որի ընթացքում անդրադարձավ անցած ժամանակաշրջանում կատարված աշխատանքներին, առկա հիմնախնդիրներին և ծրագրերին:

Անդրադարձ Համո Սահյանի բանաստեղծական աշխարհին

ՄՐՅՈՒՅԹ

Սիսիանի քաղաքապետարանը և «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի 100-ամյակի կապակցությամբ հայտարարում են արձակ և չափածո խոսքի մրցույթ. շարադրություն, բա-



նաստեղծություն, խոհ և այլն: Մրցույթի թեման արդեն իսկ ազդարարեցինք վերնագրում՝ «Անդրադարձ Համո Սահյանի բանաստեղծական աշխարհին»: Վերնագրի ընտրության հարցում մրցույթի յուրաքանչյուր մասնակից ազատ է:

Մրցույթին կարող են մասնակցել մարզի հանրակրթական դպրոցների սովորողները, միջին -մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, ինչպես նաև Սյունիքի մարզի մինչև 30 տարեկան տղաներն ու աղջիկները:

Մրցույթի մասնակիցների խոսքը մինչև 2014թ. հունվարի 1-ը պետք է ներկայացնել «Սյունյաց երկիր» խմբագրություն: Դրանք

կքննարկվեն խմբագրության զեղարվեստական խորհրդում և Համո Սահյանի 100-ամյակի նախապատրաստական աշխատանքների կազմկոմիտեում (Սիսիանի քաղաքապետարանում ստեղծված), որոնք էլ կորոշեն լավագույն երեք աշխատանքը:

Լավագույն գործերի հեղինակները կարժանանան դրամական պարգևի: Մրցանակակիր նյութերը կիրապարակվեն (հեղինակի լուսանկարով) «Սյունյաց երկիր» թերթի Համո Սահյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում:

Մրցույթին առնչվող հարցերով կարող եք դիմել թերթի խմբագրություն:

«Սյունյաց երկիր»

Սյունիքի գազի ֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի հայտարարությունը

Հարգելի բաժանորդներ
Եղեք ուշադիր գազի օգտագործման ժամանակ: Չնարավոր վթարներից եւ դժբախտ դեպքերից խուսափելու համար պահպանեք հետևյալ պահանջները:
■ օգտվեք միայն գործարանային արտադրության եւ ավտոմատ սարքերով հագեցված գազասարքերից,
■ օգտվեք միայն ծառայության կողմից թույլատրված եւ գազի ֆիկացման մասնագետով նախատեսված գազասարքերից: Մի կատարեք գազասարքերի ինքնակամ տեղադրում կամ տեղափոխություն,
■ ջեռուցման սարքերից եւ ջրատաքացուցիչներից օգտվեք ծխատար ուղիների քարշը պարտադիր ստուգելուց հետո: Սարքը գործարկելուց 3-5 րոպե հետո կրկին անգամ ստուգեք ծխատարի քարշը,
■ օգտագործվող գազասարքերը մի թողեք առանց հսկողության եւ շահագործեք միայն ընտանիքի չափահաս անդամների կողմից: Գազասարքերի երկարատև օգտագործման ընթացքում համախառն օդափոխեք շինությունը,
■ խստիվ պահպանեք և անձառեք իր հոսանքից, իսկ ազդանշանը գործելու դեպքում անհապաղ դիմեք 1-04 ծառայությանը եւ ոչ մի դեպքում ինքներդ մի բացեք կափույրն ու մի վերականգնեք բնակարանի գազամատակարարումը:
Հարգելի բաժանորդ, առջեւում ձեռք է լինե՞ք զգո՞ն եւ միասին ապահովե՞ք մեր անվտանգությունը:

Մեղրի փորձ է արվում հենց քաղաքի ներսում կառուցել հէկ

ԻՐԱՎԻՃԱԿ

Սկիզբը՝ էջ 1
Ներքին մերձեղ քաղաքի տարածքում հէկի կառուցման համար հողամասի կատեգորիայի փոփոխության վերաբերյալ առաջարկը: Սակայն ավագանու ինքն անդամից ութը կողմ է քվեարկել քաղաքապետի առաջարկությանը:
Դրանով, փաստորեն, ավագանին մեղսակից է դարձել Մեղրիում իրականացվող բնապահպանական աղետաբեր քաղաքակրթությանը:
Ստեղծված իրավիճակը եւս մեկ անգամ ցույց տվեց, որ համայնքի

ավագանին ի գործու չէ սթափ նայելու իրերի դրությանը եւ պաշտպանելու մեղրեցիների շահերը: Հարցի քննարկումը որեորդ անգամ ցույց տվեց, որ իմ եւ ավագանու անդամների գերակշռող մասի պատկերացումները Մեղրու առջեւ ծառայած հիմնախնդիրների վերաբերյալ սկզբունքային տարբերություններ ունեն եւ անհամատեղելի են: Եթե մինչեւ հիմա փոքր հէկերը Մեղրիում կառուցել են քաղաքի շրջագծից դուրս, ապա դա ինչ-որ չափով հասկանալի է եղել: Իսկ երբ հէկը փորձում են կառուցել հենց քաղաքի ներսում, ապա դա որեւէ ողջամիտ բացատրություն ունենալ չի կարող:
Մեղրու ավագանու ընդունած որոշումը, հայտարարում են, հերթական լուրջ հարվածն է Մեղրի քաղաքի բնապահպանական կացությանը: Եվ նման ավագանու կազմում իմ հետագա գործունեությունն աննպատակահարմար են գտնում:
Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ ես ցած են դնում Մեղրի համայնքի ավագանու անդամի լիազորությունները:

Սիսիանում վրդովված են ու անհանգստացած

ԻՐԱՎԻՃԱԿ

Սկիզբը՝ էջ 1
տատության միացման անխուսափելի պրոցես, ինչը տեղի է ունենում հանրապետության այլ շրջաններում եւս: Որոշներն էլ մեղադրում են «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ մրցակցությանը չհիմնադրու, իր առաքելությունը ոչ բավարար կատարելու մեջ, ինչի պրոյուցումը քաղաքացիական բնակչության հաճախումները զինվորական հոսպիտալ շատացել են: Արտյոմ Թադեւոսյանը, սակայն, համաձայն չէ վերջին դիտարկումին եւ հավաստում է, որ Սիսիանի հիվանդանոցում տարեկան մոտ 1000 մարդ է բուժվում, պոլիկլինիկան էլ ունենում է 150 հազարից ավելի այցելու:
Շրջանառվում է մեկ ուրիշ վարկած եւ՝ իբր օպտիմալացում կոչված միջոցառումը կադրային ինչ-ինչ խնդիրներ լուծելու թաքուն նպատակ է հետապնդում, որը մեր օրերում այնքան էլ անհավանական

չէ:
Աղիտուի կայագորային հոսպիտալի տնօրեն Դանիել Սկրոյանի կարծիքով՝ դեռեւս վաղ է ասել, թե ինչ է կատարվում, եւ օպտիմալացման արդյունքում ինչ կունենանք Սիսիանում: Նա տեղեկացնում է նաեւ, որ հոսպիտալի մահճակալների թվի տարբերակային չափով իրենք քաղաքացիական բնակչություն սպասարկելու իրավունք ունեն, թեւ այդքան հիվանդ (քաղաքացիական բնակչությունից) սովորաբար չեն ունենում: Ի դեպ, զինվորական հոսպիտալը սպասարկում է նաեւ զինվորականների ընտանիքի անդամներին:
Խնդրո առարկան մտահոգում է նաեւ Սիսիանի քաղաքային իշխանությանը: Ըստ քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի՝ «Սիսիանի ավանդական հիվանդանոցը պետք է պահպանվի, օպտիմալացման անհրաժեշտությունն էլ պետք է հիմնավորվի, եթե այդ հարցն իրող օրակարգում է: Եվ քանի որ օպտիմալացումը, ինչպիսի տեսքով էլ իրականացվի, ունենալու է սոցիա-

լությունները:
Այդ քայլով միաժամանակ փորձում են եւ տարածքային ու համայնքային, եւ հանրապետական իշխանություններին սթափության մղել եւ գոնե հետայսու գերծ պահել Մեղրիում իրականացվող անհեթեթ գործելակերպից: Նաեւ փորձում են հերթական անգամ ցուցանել, որ Մեղրու բնակչության զգալի մասն անընդունելի է համարում շրջանում իրականացվող իշխանական քաղաքականությունը:
Ու քանի որ 2012թ. Մեղրու ավագանու անդամ են ընտրվել ձեր կամքով, ուզում են տեղյակ լինեք ավագանու անդամի պարտականություններից հրաժարվելու իմ որոշման մասին:
Նաեւ երախտագիտությունն են հայտնում ձեզ՝ վստահության ու համատեղ աշխատանքի համար:
Հավատացնում են՝ այսուհետ եւս ուժերիս ու գիտելիքներիս չափով շարունակելու եմ օգտակար լինել մեր բժօրքան Մեղրի քաղաքին ու տարածաշրջանին»:

3.9. Ուն համար է, այնուամենայնիվ, Մեղրի քաղաքում հէկ կառուցելու նպատակով հողի կատեգորիայի փոփոխություն կատարվում, այն էլ՝ ավագանու արտահերթ նիստ գումարելով:
Մեղրիում, այդ առիթով, շրջանառվում են կոնկրետ անուններ, այդ թվում՝ հանրապետության մասշտաբով հայտնի ցեղերի անուններ:
Կարելոյը, սակայն, դա չէ: Այլ այն, որ, դարձյալ Մեղրիում շրջանառվող խոսակցությունների համաձայն, այդ գործարքը կատարվում է Սյունիքի այլեւս ոչ նոր մարզպետի գիտությամբ:
Այլեւս ոչ նոր մարզպետը, կարծում ենք, պետք է պատասխանի պարզազույն հարցին՝ ինքն առնչություն ունի՞ Մեղրու ավագանու նույնների 19-ի նիստում քննարկված հարցի հետ, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա ինչպե՞ս է վերաբերվում Մեղրի քաղաքի տարածքում հէկ կառուցելու նախաձեռնությանը: ■

Սյունյաց երկիր

Ս Ս Ս Ն Օ Ր Տ Ա Թ Ե Ր Թ
Գլխավոր խմբագիր՝
ԸՆՇՈՒ ԳԷՉԷՆՈՍ ՍՍԻՍՍ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինքնբերներ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ՇԱՆՈՒԹՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՍՏՆԱԿԻ ՍՏՆԱԿԻ ՍՏՆԱԿԻ
ՍՏՆԱԿԻ ՍՏՆԱԿԻ ՍՏՆԱԿԻ
ՍՏՆԱԿԻ ՍՏՆԱԿԻ ՍՏՆԱԿԻ

Գրանցման վկայականը՝ Օ1Մ Օ00231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպագրական 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 22.11.2013թ.:

ՎԻԳԵՆ ԼԱԼԱԶԱՐՅԱՆ. «Սյունեցին պետք է առողջ, ուժեղ եւ աննկուն լինի՝ իր լեռների պես...»

«ՆԱՏԱԼԻ ՏԱՐՍ ՄԱԼՈՒԹՎ» ԲԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՅՅՈ ԱՅՈՒՆԻԵ

Սկիզբը՝ էջ 6
վորված է որոշ հիվանդությունների վաղ ախտորոշման ու բուժման անհնարինությունը: Այդ ցավալի հանգամանքը տեղական բժիշկների մեղքը չէ, եւ ես համոզված եմ, որ եթե այդ հարցն այստեղ էլ լուծված լիներ՝ մեր այցելիքի եւ ուղեգրերի կարիք ամենեւին չէին լինի: Կլինիկն միայն ցանկալի է անհրաժեշտ համագործակցումներ՝ ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ արտերկրի հիվանդանոցների ու մասնագետների հետ :
– **Պարբերաբար կազմակերպված ձեր այցելություն-ընդունելությունները մարզեր ի՞նչ կարելու հետեւությունն են խորհուրդ տվեցին ձեզ:**
– Ամենակարելիքը, որ հասկացանք, մեր այցելությունների խիստ կարեւորությունն ու անհրաժեշտությունն էին: տեղական բժիշկները ծանոթանում են մեր աշխատանքին, մտիկից համագործակցում մեզ հետ:

Մեր առաքելությունը կողքից նրանց փոքր-ինչ օգնելն է, բայց հիմնական բեռը դարձյալ մնում է նրանց ուսերին:
Հետեւությունը եւ տեղերում բարձրորակ բժշկության կազմակերպման ելքը մեկն է՝ մարզերում պետք է ուժեղացվեն հիվանդանոցները՝ եւ մասնագետներով, նորանոր կարգերի համարվամբ, մասնագիտական անընդմեջ կատարելագործմամբ, եւ արդիական բուժարքավորումներով ու դեղորայքով:
Իսկ քանի որ Սյունիքի մարզը մայրաքաղաքից բավականին հեռու տարածաշրջան է, ուրեմն, առավել քան կարիք կա Սյունիքում տեղական հիվանդանոցների, տեղական բուժապասարկման ամրապնդման ու զարգացման:
Այս առումով Գորիսում սրտաբանական հիվանդանոցի ստեղծումը հսկայական դեր է ունենում Սյունիքում: Այն կոչված է սպասարկելու ինչպես ողջ տարածաշրջանին, այնպես էլ Արցախի բնակչությանը: Սուր ինֆարկտով հիվանդն այլեւս կարիք չունի թանկ ժամանակ կորցնելու՝ մայրաքաղաք հասնելու համար:

Շատ կարճ ժամանակամիջոցում սրտային լուրջ խնդիրներ ունեցող հիվանդը ստանում է անհրաժեշտ եւ բարձրորակ բուժօգնություն հենց տեղում:
– **Ի՞նչ մարզանք եւ խոսք ունեք՝ ուղղված այունեցիներին եւ ի՞նչ ակնկալիք մեր իշխանական մարմիններից:**
– Իմ սիրելի սյունեցիներին, ովքեր իմ համար ընտանիքի անդամի պես թանկ ու հարազատ են, ամբողջ սրտով մաղթում եմ առողջություն, թող իրենց լավ պահպանեն ու չհիվանդանան, հակառակ դեպքում՝ անմիջապես կանխարգելեն եւ բուժեն: Հավատացեք, երբ մեր բժշկական կենտրոն է դիմում որեւէ սյունեցի, ձգտում են ամեն ինչով օգտակար լինել, բայց, միեւնույն է, սիրոս ցավով է հիվանդ սյունեցի տեսնելիս...
Սյունեցին պետք է առողջ, ուժեղ եւ աննկուն լինի՝ իր լեռների պես: Սյունիքը մեր երկրի համար միշտ էլ քայքայի ուսումն է եղել, կարելորագույն եւ հզոր դարպաս:
Միակ ակնկալիքս պետական մարմիններից այն է, որ շուտապիւր

ստեղծվի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու համար բժշկական պարտադիր պետական ապահովագրություն, հնարավորինս շուտ մեր երկրի քաղաքացին պաշտպանված եւ ապահովագրված լինի անցանկալի հիվանդություններից եւ անվճար բուժումներ ստանա անհրաժեշտության դեպքում: Իսկ դա հնարավոր կլինի միայն բժշկական ապահովագրական համակարգի նորմալ գործարկման դեպքում:
Կուզենայի, որ պետական մարմիններն առավել ուշադիր եւ հոգատար լինեին առողջապահական հաստատությունների խնդիրների ու հոգսերի, բժիշկների նկատմամբ: Ամեն ինչ չէ, որ կարելի է լուծել առողջապահության նախարարության մակարդակով, շատ հաճախ տարածքային, համայնքային իշխանությունների դերը կարող է շատ ավելի սրտացավ եւ արդյունավետ լինել:
– **Հնորակալություն, բարի ծառայություն ձեզ. չէ՞ որ սա էլ է ծառայություն եւ ամենեւին՝ ոչ պակաս կարելու:**
ՍՈՒՍՆԱ ԲԱԲԱԶՆԱՅԱՆ